նուիրեամբ. ծանիք Զ եկեղեցոյ լեալ քահանայք եւ ժողովուրդք, որ վասն զանձանակին Իշմիածնայ՝ այլ չբռնել, քանզի նոքա առեալ զտուրս և զողորմութիւնս մեր, առեալ տան կախարդաց և վըհուկաց, որ և ինձ զարան գործել կամեցան՝ հանել ի կենաց. վասն որոյ և այս հրամանաւ մեր եղև, որ և այսուհետև[1]) թո՛ղ բարձցի ի ձէնջ, և եթէ ոք ընդդիմանայցէ, նա է մեր թշնամի, թո՛ղ գայ տայ պատասխանին բռնաւորաց, և ի թագաւորէ կարեմք զիւրեանք ձերիմել. և այս լիցի ճուռուզ անօրէն գնացից նոցա: Եւ ես ոչ բռնեցի զթագաւոն և այլն նոյնպէս, և ոչ կարացին խօսել: Երեկոյիս ի ժամ գնացի և անտի ի տուն Մըղտեսոնցն, և եկեալ էին անդ Մղտեսի եաղուպն և կինն, որպէս և Յառուկի փոքր աղջիկն և անդ պառկեցաք, և երեկոյիս եաղուպն չեկաւ, այլ Թագէոսն[2]) և Տէր Պետրոսն իւրեանց գեղացի եկին երեկոյիս:

Եւ ի գէպ յետնուցս Հինախատանայ էլչի եկաւ ի թագաւորն և ի ժամուս այս գիտս անցաւ:

Կիրակի (4 Մայիս) առաւօտուս ելեալ գնացի ի Սուրբ Գէորգ և զՄղտեսի եաղուպն կանչեցի, և անտի եկայ ի Սուրբ Նիկողոս, և խաչ օծեց եպիսկոպոսն Յաչատուր, որ և այսօր երեման Յաչ ասի: Եւ յետ ժամուն գնացի ի Վալտէխանն եւ զկաթողիկոսի ուղարկած թուղթն առի, և անտի գնացի ի տուն. և յետ հացի գիր գրեցի յղել առ Տէր Յովանէսն Իշմիածնի: Եւ Տէրտէրն ել գնաց ի յԱստուածածնին, քանզի մեծ սիւնհոդոս կայր վասն թղթին Յովանէս Մուղնեցոյն, որ գրեր էր առ Դաւիթ երէցն Սուրբ Գէորգայ թէ Այն հիւճէթն որ տվաք ի Թէրզի Գրիգորն, նա ի՞նչպէս արաւ, և ի մէջ խցին ահտ ու կուֆտ որ արաք, դու, Տէ՛ր Դաւիթ, գնա՛ տես ի՞նչպէս արաւ, միըսամիոջէ

1) այսուհետու. 2) Թաթէոսն.